ՀԱՄԱԶԳԱՑԻՆ

ՑՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ

—

Անցեալ տարի «Մշակի» խմբագրութիւնը ունէր յօգուտ դպրոցական ֆոնդի 53 ր., որի վրա խմբագրութիւնը իր միջոցներից աւելացրել էր 47 ր., իրրև նուէր իր կողմից, ուրեմն կար 100 ր. (տես «Մշակ» 1912 թ. № 234). ապա ստացվել էին նուէրներ 12 ր., ընդամենը ուրեմն 112 ռուբլի (տես «Մշակ» 1912 թ. №№ 235 և 258)։ Նոր ստացանք՝ 1) Գանձակից, Գ. ա. ք. Թումանեանից՝ 5 ր., 2) Կիսլովոդսկից, բժշկապետ Աւ. Բաբայեանից (տես այսօրվայ նամակը) 50 ր.։ Ուրեմն մինչև այսօր ստացել ենք ընդամենը 167 ռուբլի։

—

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

Յօբելեանի առիթով առաջնորդարանում ստացված են հետևեալ նուիրաբերութիւնները՝ դպրոցական ֆոնդի համար. Մարկոս Դօլուխանեանից՝ 500 ռուբլիանոց 4% մի ընտա, Աբրահամ ք. Ղազարեանից՝ 25 ր., Կոստ. Իւզբաշեանից՝ 3 ր., բանաստեղծ Յովհ. Թումանեանից՝ 25 ր.։

Առաջնորդ՝ Մեսրոպ եպիսկոպոս

—

(Նամակ խմբագրութեան)

Կիսլովոդսկ, 22 սեպտեմբերի

Համարելով ամենազգայունի պարտք՝ մասնակցել առաջիկայ հոկտ. 12—13-ին տօնելի հայերիս ամենաունեւ և ամենավսեմ յօբելեանին, օժանդակելով ըստ չափու կարողութեան Վեհափառ Կաթողիկոսի ծրագրած ու հաստատած «դպրոցական ֆոնդին», ուղարկում եմ ահա, նախքան մեկնելս Կիսլովոդսկից դէպի Պարիզ, իմ չնչին լուման՝ յիսուն ռուբլի խնդրելով յանձնել (50 ր.),

ՅՕԲԵԼԵԱՆ

յօբելեանական յանձնաժողովի հանգանակութեան գանձանակին։

Բժշկապետ Ա. Բաբայեան